

ԱՆԳԼԵՐԵՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԵՐԵՆ ՀՆՁՅՈՒՆԱԴԱՐՁՄԱՆՆ ԱՌՆՉԿՈՂ
ՄԻ ՇԱՐՔ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Թարգմանության տեսության հիմնական խնդիրներից մեկն է բնագրի ազգային յուրօրինակության հարցը, որից մեծ չափով կախված է թարգմանության լիարժեքությունը: Թարգմանության բոլոր տեսաբաններն այս կամ այն չափով անդրադարձել են այդ խնդրին (Ա.Ֆյոդորով, Կ.Չուկովսկի, Ի.Լևի, Ա.Լիլովա, Տ.Կազակովա և այլն), ընենլ նրա էությունը, դասակարգել իրակություններն ու առաջարկել թարգմանության լեզվում դրանք վերարտադրելու կամ հաղորդելու տարբեր եղանակներ, միշտ շեշտելով, որ ազգային յուրօրինակությունը պահպանելու համար կարևոր է հնարավոր առավելագույն չափով պահպանել նման բառերի բնագրային ձևը:

Ազգային երանգավորում ունեցող բառեր են նաև հատուկ անունները, մասնավորապես՝ անձնանունները: Ընդ որում այնքան վառ է այդ երանգավորումն անձնանունների մեջ, որ ընթերցողը գրեթե անսխալ կարող է որոշել անունը կրողի ազգային պատկանելությունը: Ինտևաբար, բնագրի յուրօրինակությունը պահպանելու համար անհրաժեշտ է թարգմանության լեզվում ճիշտ վերարտադրել դրանք, այսինքն՝ հնչյունադարձել այնպես, ինչպես արտասանվում են բնագրում, բայց միաժամանակ, չի կարելի խախտել թարգմանության լեզվի հնչյունական օրինաչափությունները: Հնչյունադարձված անունը չպետք է պարունակի թարգմանության լեզվի համար անսովոր կամ դժվար արտասանելի հնչյունախմբեր: Այս պրոբլեմը ևս բազմիցս ըննարկվել է թարգմանության տեսաբանների կողմից (Տ.Կազակովա, Ն.Արիստով և այլն), բայց հայերենի առնչությամբ այն սպառիչ ըննության չի ենթարկվել: Մինչդեռ անգլերեն անունների հայերեն հնչյունադարձումը մեծ բարդություն է ներկայացնում՝ երկու լեզուների հնչյունական համակարգերի միջև որակական և քանակական մեծ տարբերության պատճառով: Անգլերեն

լեզվի մի շարք հնչյուններ (æ, օ, | – այլն) և երկհնչյուններ (օս, օձ, օձ այլն) հայերենում չունեն համարժեքներ, և չկան դրանք տառադարձելու միասնական կանոններ: Դրա հետևանքով հայերեն թարգմանությունները հեղեղված են հատուկ անունների ոչ ճիշտ հնչյունադարձություններով*:

Հնչյունադարձության ընդգրկում, միասնական կանոններ չունենալն էլ հանգեցնում է այն քառսային վիճակին, որ տիրում է թարգմանական գրականության մեջ: Յուրաքանչյուր հնչյուն, անկախ այն բանից՝ կա հայերեն համապատասխան հնչյուն, թե ոչ, տարբեր թարգմանիչների կողմից հնչյունադարձվում է տարբեր կերպ:

Տեղին է մեկ անգամ ևս շեշտել, որ անգլերեն բառերի գրության և արտասանության միջև բավական մեծ տարբերության պատճառով ընդունված է հայերեն թարգմանելիս հատուկ անունները վերարտադրել հնչյունադարձության (տրանսկրիպցիա) միջոցով, այսինքն անկախ բառերի գրության ձևից, մենք հայերեն տառերով հաղորդում ենք նրա արտասանությունը միայն: Տառադարձության (տրանսլիտերացիա) մեթոդը, այսինքն անգլերեն անվան տառերը հայերեն համապատասխան տառերով փոխարինելը անընդունելի է, քանի որ խիստ աղավաղվում է արտասանությունը, օր.

Leonard ['lenəd] - Լեոնարդ (2)

Leila ['li:lə] - Լեյլա (4)

Forestier ['fɔristjə] - ֆորեսթիեր (3)

Eleanor ['elinə] - Էլեանոր (3)

* - Այս խնդիրը լուծելու նպատակով ՀՍՄՄ Տերմինաբանական կոմիտեն երկու անգամ (1939թ. և 1983թ.) ընդունել է որոշումներ և սահմանել մի շարք կանոններ, որոնք սակայն, այնքան էլ մեծ ուշադրության չեն արժանացել թարգմանիչների կողմից, մասամբ գուցե թերի լինելու, ոչ բոլոր հնչյուններն ընդգրկելու պատճառով, մասամբ էլ բնագրային հնչողությունը հնարավորին չափ պահպանելու՝ թարգմանիչների ձգտմանը հակադրվելու պատճառով:

Ինչպես տեսնում ենք, արտասանության աղավաղումը բերում է ազգային կոլորիտի աղավաղման, քանի որ ոչ՝ Լեոնարդ, ոչ Էլեանոր, ոչ էլ հատկապես Լեյլա անունները չէին կարող պատկանել անգլիացու կամ ամերիկացու:

Քննարկենք սխալ հնչյունադարձման մի քանի առավել տարածված երևույթներ, որոնք խախտում են հայերենի հնչյունական նորմերը և որոնցից հարկ է խուսափել*:

Հատկապես աններելի կարելի է համարել անգլերենի [ə] հնչյունը հայերենում բառամիջում ը հնչյունադարձելը, որը գրեթե համատարած բնույթ է կրում վերջին մի քանի տարիներին հրատարակված թարգմանություններում, օրինակ. Linton [ˈlɪntən] – Լինթըն, Branderham [ˈbrændrəm] – Բրենդըրհեմ (7), Compton [ˈkɒmptən] – Քոմփթըն, Wishart [ˈwɪʃət] – Ուիշհըրթ (10), Sullivan [ˈsʌlɪvən] – Սալիվըն, Tomato [təˈmɑ:təʊ] – Թըմաթո (6), Compson [ˈkɒmpzən] – Քոմփսըն (15), Oakhurst [ˈəʊkhə:st] – Օուքհըրսթ (16)

Առավել ևս սխալ է ը-ով փոխարինել որևէ այլ հնչյուն, ինչպես՝ Juno [ˈdʒʊnəʊ] – Ջընո (7), Bugs [bʌgz] – Բըգս, Buck [bʌk] – Բըք, Beale [ˈbi:li] – Բիլլ (10)

Իսկ ահա բառասկզբի [ə]-ն, որ կարծում ենք խորթ չէ հայերենին, անհարկի հնչյունադարձվել է Է՝ Earnshaw [ˈə:nʃɔ:] – Էրնշոու (7):

Երբեմն թարգմանիչը քիչ ուշացումով, բայց այնուամենայնիվ հիշում է, որ հայերենի հնչյունական նորմերին խորթ է բառամիջի ը-ն (եթե արմատի սկզբնատառ չէ), և ուղղում է սխալը՝ արդյունքում առաջարկելով անգլերեն անվան երկու հայերեն տարբերակ (հաճախ երկուսն էլ սխալ), օրինակ.

Custis [ˈkʌstɪs] – Ջըսթիս, Ջեսթիս, Sergeant [ˈsa:dʒənt] – Սըրջենտ, Սըրջընթ, Shuster [ˈʃʌstə] – Շասթըր, Շասթեր (10):

Սեր կարծիքով սա այն առանձնահատուկ դեպքերից է, երբ կարելի է կիրառել տառադարձության սկզբունքը, այսինքն՝ եթե վանկի ձայնավորը անգլերենում արտասանվում է [ə], ապա հայերենում պետք է հաղորդել նրա

գրությունը, ոչ թե արտասանությունը: Այդ դեպքում կստացվի Լինքոլն, Ուիչլայթ, Սալիվան, և այլն:

Չենք կարող համաձայնել նաև այն թարգմանիչների հետ, որոնք անգլերեն անվան կրկնակ բաղաձայնները հայերենում նույնպես կրկնակ բաղաձայնով են փոխարինում, օրինակ. Zillah ['zilə] - Զիլլահ (7), Kenneth ['keniθ] - Քեննեթ (5), Penny ['peni] - Փեննի (12), Barrow ['bæɾəu] - Բարրոու (10) – այլն: Եթե այդ կրկնակ բաղաձայնները արփասանվում են որպես մեկ հնչյուն, ապա պետք է գրվեն 1 տառով (Զիլա, Քենիթ, Փենի, Բարրու):

Ժամանակի ընթացքում հետաքրքիր փոփոխության է ենթարկվում [w]-ի հնչյունադարձման սկզբունքը: Մի քանի տասնամյակ առաջ հրատարակված թարգմանություններում [w]-ն հիմնականում փոխարինվում էր վ-ով (Վիլյամ): Հետագայում [w]-ն հայերենում դառնում է ու (բացառությամբ այն դեպքերի, երբ նրան հաջորդում է ը ծայնավորը), ինչպես Woodrow- Վուդրո: Սակայն վերջին տարիների թարգմանություններում, չգիտես ինչու, նորից վերադառնում են վ-ին, օրինակ. Weill [weil] - Վայլ (6), Edwards ['edwədz] - Էդվարդս (16), Wheeler ['wi:lə] - Վիլեր, Wakefield ['weikfi:ld] - Վեյքֆիլդ, Winkle [wɪŋkl] – Վինքլ (16) և այլն:

Այս ձևերը չեն համապատասխանում բնագրային հնչողությանը, և ճիշտ պետք է համարել Ուեյլ, Էդուարդս, Ուիլեր, Ուեյքֆիլդ, Ուինքլ ձևերը:

Միասնական կարծիք չկա նաև [æ] հնչյունի վերաբերյալ, որը երբեմն հայերենում դառնում է ա, երբեմն էլ ե: Ցանկացած երկի թարգմանության մեջ կարելի է հանդիպել 2 տարբերակով էլ հնչյունադարձված անունների, օրինակ.

Barrow [bæɾəu] - Բարրոու, Baghot ['bægəθ] - Բեգոթ (10),

Baggot ['bægəθ] - Բագոտ, Gavan ['gævəθ] - Գևան (2),

* - Եշենք, որ շատ հատուկ անուններ բազմիցս օգտագործվելով, ձեռք են բերել հնչյունադարձման ավանդական ձևեր (թեկուզ և սխալ): Այդ ավանդական ձևերը փոխելը նպատակահարմար չի կարող լինել, ուստի այդպիսի անուններին չենք անդրադառնում:

Allen ['ælin] - Ալեն, Marion ['mæriən] - Մերիլոն (3),

Alec ['ælik] - Ալեք, Andrew ['ændru:] - Էնդրյու, Lang [læŋ] - Լանգ, Լենգ (10)

Քանի որ [æ] հնչյունին ճշգրիտ համարժեք չեն ոչ ա-ն, և ոչ է-ն և այն միջին դիրք է գրավում երկուսի միջև, կարելի է այդ հնչյունի նկատմամբ կիրառել տառադարձման սկզբունքը և այն փոխարինել ա-ով:

[æ] հնչյունը երբեմն սխալ տառադարձվում է եյ, օրինակ Gladys ['glædis] – Գլեյդիզ (10), իսկ մի այլ շատ տարածված անուն՝ Sally ['sæli], նույն թարգմանության մեջ չգիտես ինչու դարձել է Սոլլի (10): Եթե այն այդ ձևով հանդիպեր 1-2 անգամ, կարելի կլիներ որպես վրիպակ ընդունել:

Չմոռանաք, որ որոշ հաճախ հանդիպող անուններ ունեն հնչյունադարձման սխալ, բայց արդեն ավանդական դարձած ձևեր, որոնք փոխել, զուցե ճիշտ չլինի, օրինակ, Andrew - Էնդրյու, Jack – Ջեք, Carol – Քերոլ: Անդրու, Ջաք, Քարոլ անուններն անսովոր են հնչում:

Անթույլատրելի սխալ է համարվում անգլերեն [r] հնչյունը բառասկզբում ռ-ով փոխարինելը, քանի որ դա ակնհայտորեն հակասում է հայերեն հնչյունական օրինաչափություններին, օրինակ, Richman ['ri:tʃmən] – Րիչմըն, Reginald ['redʒi:nld] – Րեջինըլդ (3) և այլն, կարելի է [r]-ն բառասկզբում հնչյունադարձել ղ (Ռիչման, Ռեջինալդ), իսկ մնացած դիրքերում ը:

Անգլերենի բաղաձայն հնչյուններից հայերեն համարժեք չունեն միայն [ə]-ն և [ɪ]-ն: Կարծում ենք, դրանք համապատասխանաբար պետք է փոխարինել ք և ք տառերով, օրինակ Bertha ['bə:əə] - Բերթա (14), Nathan ['neiəən] – Նաթան (4), Rutherford ['rʌ | əθəd] – Ռուդրֆորդ (6) և այլն:

Բարդություններ են ներկայացնում նաև այն երկհնչյունները, որոնց անդամներից մեկը [ə]-ն է, օրինակ Napier ['neipɪə] կամ [nə'piə] – Նեպիլըր (3) և այլն: Կարծում ենք՝ նման երկհնչյունները պետք է փոխարինել 1 տառով, օրինակ, Joe [dʒəu] – Ջո, Golightly ['gəʊlaɪtli] - Գոլայթլի (6), Hareton [hə'teɪən] – Հերթըն (7) (ճիշտ է՝ Հերթոն) Tierney ['ti:əni] – Թիրնեյ (2) (ճիշտ է Թիրնի):

Նշենք, որ բերված օրինակները հիմնականում քաղել ենք շնորհալի թարգմանիչների գործերից, որոնց թարգմանությունների արժեքը բոլորովին չի խամրում հատուկեմտ սխալ տառադարձումների պատճառով: Բայց որոշ թարգմանություններում նման սխալները այնքան հսկայական թիվ են կազմում, որ ստիպված ենք պատճառը փնտրել թարգմանչի անփութության մեջ. թարգմանիչը հարկ չի համարում հատուկ անվան արտասանությունը նախօրոք ստուգել բառարանով, հետո նոր՝ հնչյունադարձել հայերեն:

Թարգմանչի անփութությանը պետք է վերագրել նաև մեկ այլ դատապարտելի երևույթ (որն, ավաղ, հազվադեպ չէ), երբ հատուկ անվան հոլովական կամ հոգնակի վերջավորությունը կցվում է հայերեն հնչյունադարձված անվանը, օրինակ.

The Murphys ['mə:fi] - Մրֆիսները, Brancusi's - Բրանքուսիսի, The O'Flanagans ['flænəgəŋ] – Օ'Ֆլանքենսներ (10),

The Devines [di'vi:n] կամ [di'vain] - Դևինսներ, Mangan's [mæŋgəŋ] –

Մանգանսի, The Dunns [dʌn] - Դանսները, որից հետո կարդում ենք՝

Tizzie Dunn – Թիզզի Դանս, Mc loud's ['kæk'laudr] – Միքլաուդսի (2):

Խոսելով թարգմանիչների կողմից կատարվող սխալների մասին, չի կարելի նորից չանդրադառնալ անգլերեն հատուկ անունների հայերեն տառադարձման մասին տերմինաբանական կոմիտեի որոշումներին: Այդ որոշման մի քանի կետեր հակասում են բնագրային հնչողությանը հարազատ մնալու սկզբունքին, կասկած առաջացնելով նրանց նպատակահարմարության վերաբերյալ, և այդ իսկ պատճառով չեն ընդունվում թարգմանիչների կողմից: Օրինակ, նրանց կողմից բացահայտորեն մերժվում է [p], [t], [k] հնչյունները բացի տառասկզբից մնացած բոլոր դիրքերում պ, տ, կ տառադարձելու կանոնը, օրինակ.

Clark [kla:k]- Քլարք, Sutpen ['sʌtpən] - Սաթփեն (15), Carter [ka:tə] -

Քարթեր, Tripp [trip] - Թրիփ, Priestley ['pri:stli] – Փրիսթլի, Shipton

['ʃiɪptən] - Շիփթոն (16) և այլն:

Հարց է ծագում, ինչու պ, տ, կ, եթե հայերենում կան փ, ք, թ հնչյունները: Գուցե կարելի է տարբերակել այն դեպքերը, երբ նախորդ որոշ հնչյունների ազդեցությամբ [p], [t], [k]-ն հնչում են որպես խուլ բաղաձայններ

(այլ ոչ թե տարբերակել ըստ բառի մեջ նրանց ունեցած տեղի): Բայց, հավանաբար, սա կստեղծեր ավելորդ բարդություններ:

Հասկանալի չէ նաև [k] հնչող ck տառակապակցությունը և հնչյունադարձելու պահանջը: Ինչպես և սպասելի է, այն մեծ մասամբ փոխարինվում է ք-ով, օրինակ, Lockwood [ˈlɒkwʊd] - Լոքվուդ (7), Arbuck [ˈɑːbʌk] - Արբաք (10), Tucker [ˈtʌkə:] - Թաքեր (6), Schacklett [ˈæklɪt] - Շաքլետ (6), Jack [dʒæk] - Ջեք (16)

Տարակուսանք է առաջացնում նաև [ei] արտասանվող a տառը և հնչյունադարձելու կանոնը: Չէ որ այդ դեպքում լրիվ աղավաղվում է հատուկ անվան բնագրային հնչողությունը, օրինակ՝ James (Ջեյմս), ըստ այդ կանոնի պետք է տառադարձվի Ջեմս, Grace (Գրեյս)՝ Գրես, Hazen (Հեյզն)՝ Հեզն, Jabes (Ջեյբս)՝ Ջեբս, Jake (Ջեյք)՝ Ջեք:

Լիարժեք թարգմանություն կատարելու համար որքան որ կարևոր է հարազատ մնալ բնագրին, պահպանել նրա ազգային յուրօրինակությունն ու երանգավորումը, նույնքան կարևոր է պահպանել մայրենի լեզվի հնչյունական օրինաչափությունները: Ուստի, կարծում ենք, վաղուց հասունացել է անգլերեն հատուկ անունների հայերեն հնչյունադարձման սկզբունքները վերանայելու և միասնական հստակ ու ընդգրկուն կանոններ սահմանելու անհրաժեշտությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- | | |
|-------------------|---|
| 1. Rybakin A.J | - A Dictionary of English Personal Names (Moscow, 2000) |
| 2. Rybakin A.J | - A Dictionary of English Surnames (Moscow, 2000) |
| 3. Аристов Н. | - Основы перевода (Москва, 1959) |
| 4. Казакова П. | - Практические основы перевода (Санкт-Петербург, 2000) |
| 5. Левый Н. | - Искусство перевода (Москва 1974) |
| 6. Рецкер Я.И. | - Теория перевода и переводческая практика (Москва, 1974) |
| 7. Лилова А. | - Введение в общую теорию перевода (Москва, 1985) |
| 8. Чуковский К.И. | - Высокое искусство (Москва, 1988) |

9. Влахов С., Флорин С. - Непереводимое в переводе (Москва, 1986)
10. Феодоров А.В. - Основы общей теории перевода (Москва, 1983г.)
11. Իշխանյան Ռ. - Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու (Երևան, 1985)
12. Սեֆերյան Ս. - Տառադարձության խնդիրը XIX դ. Շեքսպիրի հայերեն թարգմանու-թյուններում (Բանբեր Եր.Յամ. 76/1)
13. Բաղդասարյան Յ. - Ազգամշակութային բաղադրիչի դրսևորումը թարգմանության գործընթացում (Աստղիկ 1998/8)

1. Dickens Ch. - Oliver Twist (թարգման. Ա.Բազարյան, 1958)
2. Joyce J. - The Dubliners (թարգմ. Ա.Յարությունյան, Գ.Յարությունյան, Ա. Արսենյան, 1978)
3. Maugham W.S. - Rain and Other Short Stories (թարգմ. Լ.Ավետիսյան, 1981)
4. Mansfield K. - A Cup of Tea (թարգմ. Ս.Սեֆերյան, 1978)
5. Capote T. - The Grass Harp (թարգմ. ռուս. Ա.Գալստյան, 1981)
6. Capote T. - Breakfast at Tiffany's (թարգմ. Ռ.Ղազարյան, 1987)
7. Brönte E. - Wuthering Heights (թարգմ. Ռ.Ղազարյան, 1987)
8. Steinbeck J. - The Pearl (թարգմ. Ա.Բուդաղյան, 1992)
9. Fitzgerald F.S. - The Catcher in the Rye (թարգմ. ռուս. Ա.Ղուկասյան, 1978)
10. Passos John Dos - The 42nd Parallel (թարգմ. Վ.Ավետիսյան, 1988)
11. Hemingway E. - Farewell to Arms (թարգմ. Պ.Ջեյթունցյան, 1972)
12. Huxley A. - 3 stories (թարգմ. Ա.Մարգարյան, Աստղիկ 9-10, 2000)
13. Maugham S. - The Moon and Sixpence (թարգմ. Ա.Խաչատրյան, 1976)
14. Golding W. - Lord of the Flies (թարգմ. Ա.Էմին, 1990)
15. Faulkner W. - The Bear (թարգմ. Ս.Սկրտչյան, Աստղիկ 2-3, 1989)
16. - XIX դ. ամերիկյան պատմվածք (Եր. 1989, թարգմ. Ս.Սեֆերյան, Ժ.Կարապետյան, Ս.Գար-րիելյան, Ռ.Գարգալյան, Ս.Սկրտչյան և այլն)
17. Mark Twain - The Adventures of Tom Sawyer